

Հին ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՆՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Վերջին տասնամյակում եվրոպական արևելա-գիտության մեջ մի կարևոր նոր ավանդույթ է հաստատվել՝ եվրոպայի սոցիալիստական երկրների նախաձեռնությամբ պարբերաբար զու-մարվում են Հին Առաջավոր Ասիայի պատմու-թյան, հնագիտության, մշակույթի, լեզվաբանու-թյան և բանասիրության հարցերի ուսումնասի-րության բնագավառում նորագույն արդյունքներն ամփոփող միջազգային գիտաժողովները, որոնք կրում են «Շուլմու» (ակկադերեն «խաղաղու-թյուն») անվանումը։ Երրորդ «Շուլմու» գիտա-ժողովը կայացավ Չեխոսլովակիայի մայրաքա-ղաք Պրագայում, 1986 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 4-ը (նախորդ երկու գիտաժողովնե-րը հրավիրվել էին Բուզապետում և Լայպցի-գում)։ Այս անգամ գիտաժողովի գումարման նախաձեռնությունը պատկանում էր եվրոպայի բարձրագույն ուսումնական հնագույն հաստատու-թյուններից մեկին՝ Կարլովյան համալսարանին։ Երրորդ «Շուլմու» կազմակերպել է այդ հա-մալսարանի փոխտնօրինի Ֆակուլտետը՝ մասնավորապես՝ նրա Ասիական և Արևելյան հե-տազոտությունների ամբիոնը, Չեխոսլովակյան գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի և Նապրստեկի անվան ասիական, աֆրիկյան և ամերիկյան մշակույթների թանգա-րանի մասնակցությամբ։ Գիտաժողովի աշխա-տանքին մասնակցել են ավելի քան 70 մասնա-գետներ՝ պատմաբաններ, հնագետներ, բանասեր-ներ, լեզվաբաններ ՍՍՀՄ-ից, Չեխոսլովակիայից, ԳԴՀ-ից, Լեհաստանից, ԳՖՀ-ից, Բուլղարիայից, Արևմտյան Բեռլինից, Իտալիայից, Լիազումար նիստերում և մասնաճյուղերում ընթերցվել է 40 զեկուցում, որոնք արտացոլել են Հին Առաջավոր Ասիայի պատմության ուսումնասիրության հիմ-նական պրոբլեմները, ընդգրկելով Միջագետքի, Ասորիքի, Արևելյան Միջերկրականի, Փոքր Ասիայի, Հայկական լեռնաշխարհի, Արևմտյան Իրանի, Արարական թերակղզու և, առանձին «չպեքերում» Բալկանյան թերակղզու տարածքը և անդրադարձել են պղնձի-քարի դարից (խալկոի-

թից) մինչև հելլենիստական ժամանակաշրջանն ընկած ժամանակահատվածին։

Գիտաժողովում ավանդաբար կարևոր տեղ են գտել ժամանակագրական հետազոտությունների հարցերը։ Օ. Կառուրայի (Իտալիա) «Միջին խեթա-կան ժամանակաշրջանի ժամանակագրությունը» զեկուցման մեջ վերլուծվել են թագավորական տան ներկայացուցիչների կնիքների արձանա-գրությունները, որոնց տիտղոսները համադրվել են Բողազքոյի տեքստերի վկայությունների հետ։ Ջեկուցողը միջին թագավորության հիմնադիր Տահուրուաիլիի գահակալությունը դնում է մ. թ. ա. 1500—1495 թթ.։ Վ. Ռյուլիգի (ԳՖՀ) ղե-կուցումը նվիրված էր միջինասորեստանյան Դուռ-կատլիմաու քաղաք-պետության կառավարիչ «լիմ-մու»-ների ցանկերի ճշտման ու թվագրման հար-ցերին, որոնք ուսումնասիրվել են անտեսական արխիվների տվյալների հիման վրա։ Համադրե-լով ասորեստանյան սեպագիր տեքստերի և ան-տիկ հեղինակների վկայությունները, Է. Ղրան-տովսկին (ՍՍՀՄ) եզրակացրել է, որ Մարական պետության ժամանակագրության վերաբերյալ Հերոդոտի հաղորդած տվյալները արհեստակա-նորեն հարմարեցվել են այդ հեղինակի ժամանա-կագրական համակարգին. ուստի և չստեղծ է գրվեն արդի թվագրումների հիմքում։

Հին Միջագետքի ավանդական գլուղատեսե-սությունների ձևավորման և զարգացման բնական պայմանները վերլուծվել են Բ. Հրուշկայի (Չե-խոսլովակիա) զեկուցման մեջ։

Մի խումբ զեկուցումներ նվիրված էին Հին Առաջավոր Ասիայի սոցիալ-տնտեսական պատ-մության հարցերին։ Յ. Ռենգերը (Արևմ. Բեռ-լին) քննադատությամբ անդրադարձավ Հին Արե-վելքի տնտեսական համակարգերը արդի տնտե-սագիտության սահմանումների շրջանակներում վերլուծելու փորձերին։ Կ. Վուկչի (ԳԴՀ) զեկու-ցումը նվիրված էր մ. թ. ա. VI դարի Բաբելո-նիայում մասնավոր խոշոր հողատիրության և հողօգտագործման զարգացմանը, որը ներկայաց-ված էր Տաբիայի և Նրա որդիների աբխիլի վա-

վերադարձում Կ. Սոսուկի (Չեխովի) ղեկավարման մեջ արված էր խեղճական հասարակության կառուցվածքի ընդհանուր բնութագիրը Այս պարագայի հետ սերտորեն կապված են Հին Առաջավոր Ասիայի իրավունքի ուսումնասիրության հարցերը, որոնք բաղկացնում են ներկայացված էին Հ. Նոյմանի (ԳԴՀ) «Մի քանի նկատառումներ Միջագետքի վաղապատմական շրջանի իրավունքի և հասարակության վերաբերյալ», Ս. Մուրկերի (ԳԴՀ) «Պետական և միջպետական իրավունքի նորմաներ Անատոլիայում, Ասորեստանում և Իսրայիլի շրջանում մ. թ. ա. XX—XIX դարերում», Յո. Կլիմայի (Չեխովի) «Դիտողություններ ասորեստանյան օրենքների վերաբերյալ» և Վ. Յակոբսոնի (ՍՍՀՄ) զեկուցումներում Կ. Արմինյայի (ՍՍՀՄ) «Դիտողություններ խեղճական օրենքների պար. 168-ի վերաբերյալ» զեկուցման մեջ ցույց տրվեց, որ խեղճական հասարակությունում օրենքի խախտման համար պատժի չափը չէր համապատասխանում հանցագործությանը որպես խեղճական վրնասին, այլ սահմանվում էր՝ երկու և հասարակության հոգեբանական արժեքների համակարգից Առաջավորասիական հնագույն պետությունների իրավադատության պարզեցումը հետ միասնությամբ են նաև այդ պետությունների քաղաքական կազմակերպման ուսումնասիրության հարցերը Դրանց պարզաբանումը նվիրված էին Ի. Պելիերի (Չեխովի) «Սուսուրիայում» Սուսուրիայում կայսրության քաղաքական իշխանության կառուցվածքը և Յ. Բուրիանի (Չեխովի) «Երևանության կառուցվածքը Միջագետքում ուղևորական ժամանակաշրջանում» զեկուցումները Մ. Դանդամանի (ՍՍՀՄ) «Նոր-բաբելոնյան ժողովրդական ժողովրդ» զեկուցման մեջ վերլուծված էր մ. թ. ա. VI դարի քաղաքացիների ժողովի դերը Բաբելոնի քաղաքական կյանքում:

Իրավ. զեկուցում նվիրված էին Առաջավոր Ասիայի պատմական զարգացման ընթացքում առանձին պետությունների նշանակության բնութագրմանը Հ. Կլեյնի (ԳԴՀ) ներկայացրել է Հյուսիսային Ասորիքում մ. թ. ա. III հազարամյակի ներքին կենտրոն գոյություն ունեցած էրյա պետության դիրքը վաղ բրոնզե դարի վերջին փուլի քաղաքական միավորումների համակարգում է. Լորտցի (ԳԴՀ) հանգես է եկել Հայկական լեռնաշխարհի Արցախ-Նախաշա պետության բնութագրումը:

Առաջավոր Ասիայի մ. թ. ա. VII—VI դդ. քաղաքական պատմության իրադարձություններն արտացոլված էին Ա. Ջավադսկու (Ահաստան) «Սուսուրի-մանգան Գեղի ժամանակագրության մեջ», տերմինի նշանակությունը և նրա կիրառման սկզբունքները զեկուցման մեջ:

16 «Հանդիս», № 4

Դիտողություն, թեև սահմանափակ կերպով, արտացոլվել են էթնիկական տեղաշարժերի, միջէթնիկական հարաբերությունների և էթնիկական այլ երևույթների ուսումնասիրության հարցերը, որոնց նվիրված էին Ի. Բուրգելի (Չեխովի) «Անատոլիա, Կովկաս և Եվրոպա», Նազիրյանի (Չեխովի) «Ներկայիս հնդեվրոպացիների հնարավոր ներխուժման վերաբերյալ» և Լ. Վիդմանի (Չեխովի) «Եվրոպացիները Եվրոպայում զեկուցումները:

Քննարկված հարցերի շարքում առանձնահատուկ ուշադրության արժանացավ Առաջավոր Ասիայի հին ժողովուրդների դիցարանության, պաշտամունքի և ծիսական արարողությունների համակարգը, որը, սակայն, վերլուծվեց աշխարհագրական սահմանափակ տարածքի, հիմնականում՝ Փոքր Ասիայի, Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Ասորիքի տվյալներով: Ասորիք-Պաղեստինի, Արարական թերակղզու, Արևմտյան Իրանի և Նուբիայի՝ Միջագետքի հին մշակույթները այս առումով գիտաժողովում չեն ներկայացվել: Փոքր Ասիայի և հարակից շրջանների կրոնների պատմության առանձին հարցեր մշակված ու ներկայացված էին Մ. Պոպկոյի (Լեհաստան) «Ցիպպայանգայի պաշտամունքը», Լ. Յակոբ-Ռոստի (ԳԴՀ) «Դիտողություններ անձրևի խեղճական տոնի մասին», Ռ. Հոլմերի (Չեխովի) «Փոքրասիական կրոնների ազդեցությունը թրակիական պատկերացումների վրա», Յ. Ֆոստի (ԳԴՀ) «Դիտողություններ հանգուցային սիրոխեղճական պաշտամունքի վերաբերյալ» զեկուցումներում: Գ. Արեշյանի (ՍՍՀՄ) «Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի մ. թ. ա. II հազարամյակի դիցարանության հնդեվրոպական տարրերը» զեկուցումը նվիրված էր «ժնունդ-մահ-հարություն» դիցարանական համամարդկային պարբերաշրջանի համահնդեվրոպական առասպելովի կերպարների վերակազմությանը և նրանց արտացոլմանը Արարի և Կուրի միջագետքի մ. թ. ա. II հազարամյակի հնագիտական մշակույթների կերպարվեստի հուշարձաններում:

Բազմակողմանիորեն ներկայացված էին Առաջավոր Ասիայի հին լեզուների ուսումնասիրության հարցերը Տարրեր լեզվաբանության բառապաշարի պատմահամեմատական բնութագրումը նվիրված էր Վյաչ. Իվանովի (ՍՍՀՄ) «Փոքր Ասիայի հին լեզուների ազգակցությունը (խաթերենի, խուրիերենի, էտրուսկո-լեմնոսյան և հյուսիս-կովկասյան լեզուների փոխհարաբերակցությունը, խաթերենի, պալայերենի և լուվիա-լի-դիական խմբի լեզուների խմբավորման հարցեր)» զեկուցումը: Արարական թերակղզու լեզուների պատմության բազմամյա հետազոտության սով-

